առ ժամս ոչ առաքեցաք զԿիրակոս Եպիսկոպոսն, զոր եթէ արժան համարիք՝ զնա կացուսջիք աստ վերակացու դործոյն, և եթէ զայլ ոք արժանաւոր առաքէք, զնա առաքեմք 'ի Ս· Աթոռդ։ Զայս ամենայն ուղիղ մտօք ծանուցեալ՝ մնամք առ 'ի ձէնջ պատասխանուոյ · ողջ լեր երկար կենօք։

Ի 20 Յունիսի, 1837·	Ծ · Տ ·	Ծ · Տ ·	Ծ · Տ ·
Ի Կոստանդի-	Յարութիւն	Միքայել	Ճանիկ
նուպոլիս։	Երկարեան։	Փիշմիշեան։	Քեռանեայ։

Գրեաց և ինքն Կիրակոս առանձին թուղթ առ Պօղոս Եպիսկոպոս, յորում յորդորէր զնա լինել համախոհ կամաց և խորհրդոց նոցին, զի չէր ինչ տեղի կասկածանաց · եւ յետ բազում բանից յաւելու ասել՝ «Գիտես Տէր իմ, եթէ չէաք տեսեալ զցուցակ գանձեալ դրամոց հոգելոյս Տ· Գրիգորի Շղթայակրի հայրապետին, ոչ իսպառ գիտէաք՝ զի չէք ուրեք յիշատակութիւն ինչ, այլ ո՞ւր մնաց այն դրամ, զի՞նչ եղեւ, առ ի՞նչ վատնեցաւ, ոչ ոք գիտէ · ապա գրէ կարգել զմին Միւթէվէլլի Աթոռոյն՝ եւ զերկուսն Նազր և Վերակացու՝ տեսանել զհաշիւն և հոգալ զգործս Աթոռոյն։ Այլ այս խորհուրդ՝ որպէս երեւի՝ ոչ եհաս յարդիւնս յայնժամ, զի բացեալ էր դուռն խըռովութեան և հակառակութեան 'ի մէջ ազգաց՝ և Պօղոս բազում դրամոց պէտս ունէր, եւ չէր հնար հանել զայն արտաքս։

ԳԼՈՒԽ ԾԴ·

Գիր մեծի Վէզիրին առ Դատաւորն։ Ընդունմն երից հրովարտակացն Հայոց։ Հակառակութիւն Յունաց · բողոք նոցին առ Հիւպատոսն Ռուսաց։ Պատճէն թղթոց Հիւպատոսին, Փոխարքային, Դաւառապետին։ Ծաղով 'ի դատարանի վասն քննութեան խնդրոց Հայոց և Յունաց։

Յետ ընթերցման հրովարտակին Լատինաց սակս Համբարձման տեղւոյն, որպէս գրեցաք, գրեանք Դատաւորին հասին 'ի Կոստանդինուպոլիս 'ի ձեռն Սարկաւագաց, թէ